

# ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՓՈՇԻ

Մթնոլորտային փոշի գիտութեան և բնութեան տապալարիդին մէջ շատ աւելի ընդարձակ զաղափար կ'ընծայէ մեզ, քան զոր յիրականին սովորաբար կը հասկըցուի: Ամենայն մարմին որ չի պատկանիր մթնոլորտի մթողութեան, եթէ լինի գործարանաւոր և եթէ ան-գործարան, կամ որ և իցէ մարմին, որ օդոյ բաղադրութենէն արտաքս գրու-նուի, և շարժի 'ի նմա, այս անուանս բնագրոյմն յինքեան կը կրէ:

Վաղեմի փորձ մի՛ փոշոյ օդոյ մէջ դառնուելուն՝ կրնայ անոր գոյութիւնը մեզ ընդունելի ընել տալ և միայնգա-մայն պայծառ զաղափար մ'ընծայել: Այս փորձս ոչ յայլ ինչ կը կայանայ՝ բայց եթէ մութ սենեկի մը մէջ ճեղ-քուած է կամ որ և իցէ ծակէ՝ արեգա-կան ճառագայթից մուտ շնորհել, որով ընդ բովանդակ երկայնութիւն լուսա-ւոր ճառագայթին կը տեսնուին անթիւ և անհամար ամենափոքր մարմիններ, որք առկախեալ օդոյ մէջ աստ անդ կը տատանին, հետեւելով օդոյ շարժ-ման ուղղութեան:

Այս մասնրկաց մեծագոյն մասն՝ ինչ պէս յայտ է 'ի քննութեանց՝ անթիւ փանցիկք են, և սակաւ-ուին մետա-ղային փալ մը: Ամէնքն ալ առանց ա-մենին դադարելու՝ կը լուզան, կը խառնուին իրարու, կը բաժանին և դարձեալ կը խառնուին հազարամեկ կերպով, մէկմէկու կը զարնուին, կը հեռանան, և վերստին կը գառնան զար-նուելու, կարծես թէ մշտնջենական խառնակութեան մէջ կը դառնուին: Քիչ մը քշուելէն յետոյ, շուտով յետս կը գառնան՝ կրկին անդով կուռնելու: Եւ այնքան թեթիւ և փոքր են՝ որ գրե-թէ անդգալի են նոյն իսկ ամենազգա-յուն շոշափելեաց, և չնոյ թեթիւ հա-դագ մը այս մարմնոց վրայ այնպիսի խռովութիւն և խառնաշփոթութիւն կը պատճառէ՝ ինչպէս հրանօթից յան-

կարծական դնդակ մը այծեմանց և կամ նապատտակաց խումբի մը վրայ ահագին շառաւիմամբ դահալիթելով կը ներդրործէ: Ամենայն ինչ կը տեղափո-խի, կը խառնակի և կը խանգարի. նո-րաւոր խառնումներ և նորանոր շփս-թումներ կը յաջորդեն առաջնոց:

Մակայն այս առերևոյթ խառնակու-թեան և չփոթից քառորդ եթէ ոք հան-դարտութեամբ և մեկուսի յամենայն օտար խորհրդոց՝ զննէ և դիտէ, կը նշ-մարէ անդ առանց շատ աշխատանաց՝ կարգաւորութեան սկզբունք մը, օրէնք մը. առ այս՝ կը բաւէ դիտողութիւնը կեդրոնացընել փոշոյ ամպին հատի-կի մը վրայ և հետեւել քիչ մը ժամա-նակ անոր իւրաքանչիւր շարժմանց:

Այս հատն օդոյ մէջ չի շարժիր՝ ինչ պէս կը շարժի օճառի գունդ մը և կամ օդապարիկ մը մթնոլորտի ընգարձա-կութեան մէջ, այլ կը շարժի և կ'ըն-թանայ բովանդակ օդոյ զանգուածին հետ:

Կը բարձրանայ, յաջ և յահեակ կը դիմէ, յետո և յառաջ կը վաղէ, առ կայն միշտ մըտել յօդոյ, և մասնեալ անոր թեթիւ և նոյն իսկ մեզ ան-զգալի հոսանաց ձեռքը: Եթէ օդը բոլո-րովին հանգարտի, կամաց կամաց այն հատիկն յերկիր կ'իջնէ, օդոյ մէջ չի լուզար, հաւասար չի կենար օդոյ, այլ հոնդարտ և ամենահանդարտ կերպով վար կ'անկանի:

Ուրեմն բնէն թէ մթնոլորտին փոշին առկախեալ կը լուզայ օդոյ մէջ, բնա-բանօրէն նկատուելով՝ ճիշդ բացատրու-թիւն մի չէ: որովհետեւ ամենայն փոշի և որ և իցէ նիւթ՝ օտար օդոյ բաղա-դրութենէն, 'ի բաց առեալ զկազմ, կա-մաց կամաց յերկիր կ'իջնեն:

\* \* \*  
\* \* \*  
\* \* \*

Ամենայն ուրեք, եթէ լինի գոյ տե-  
ղեր և եթէ բաց, եթէ քաղաքներ և ե-  
թէ գիւղեր, եթէ ամենախոր ջրհորներ  
և բովեր և եթէ ամենաբարձր լեռներ,  
միշտ և ամէն տեղ կը գտնենք այս մել-  
նոլորտային փոշին: Տարբերութիւնն  
միայն 'ի քանակութեան է:

Ամերիկացի աստղաբաշխն լանկէյ  
բարձրագոյն լեռանց վրայ ելնելով՝ ըզ-  
նայնն գտաւ, նախ Եանայի վրայ, յի-  
տոյ անցնելով յԱլպինսն, և յետոյ Թե-  
նէրիֆֆայի գագաթն ելնելով, միով բա-  
նիւ ամենայն ուրեք: Ուրիշ հտաւացի բը-  
նագէտ մ'ալ զբաղուելով առանձին կեր-  
պով շատ ժամանակ այս նիւթիս վրայ,  
իբր արդիւնք իւր աշխատանաց 'ի լոյս  
ընծայեց երկուսնք յառաջ գրուածք մի  
անուամբս Մանրադիտական զննո-  
ղութիւնք օրոյ մէջ գտնուած փոշոյ  
շիրայ, յորում կը հաստատէ թէ պարզ  
Մոտենտ քաղաքին վրայ միջին հա-  
շուով օրուան մ'ընթացից միջոց մի  
քառակուսի մեզք դեանոյ վրայ կը  
նստի երկու հազարազրամ փոշի. որ  
առեւերոյթս ոչինչ կը նշանակէ, բայց  
նայնհաշուով առնելով բովանդակ տա-  
րուան մը մէջ ընկածը և բովանդակ  
երկրիս տարածութիւնն, կը տեսնենք  
որ հաշիւը կ'անցնի քանի մը հազար  
կենդանարներ: Իբր փոքր ապացոյց օ-  
ղոյ մէջ այս փոշոյ առատութեան, կը  
բաւէ չոռայ գայն, այսինքն դնելով  
գառարի մեծկակ անօթոյ մը մէջ քիչ  
քանակութեամբ ջուր, չարժեք զայն  
քիչ մը ժամանակ: Յետ դադարման  
կը տեսնենք ջրոյ երեսը ծածկուած  
փոշով, ջուրը կը կորսնցընէ իւր թա-  
փանցկութիւնը և կը պղտորի:

Թերեւս տարբերակ և արատքոյ կար-  
գի մեծցուցած տեսնուի այս խօսքս  
չափերուն, ասկայն պէտք է դիտնալ  
որ մեր զգայարանքը չ'զգար զայն,

ինչպէս նաև օղոյ վերաբերեալ ուրիշ  
որ և իցէ իրաց վրայ մեր զգայարանն  
խաբէրայ են: Կը նկատենք զօդ իր-  
նախաօրայ պայծառութեան և մաքրո-  
թեան. կ'ապրինք ուկիանոսի մը յո-  
տակը՝ որոյ բարձրութիւնն կը դերա-  
ղանցէ քանի մը տասն հազարամիղրեր,  
նման այն ձկանց՝ զորո բունեց Գալլէն-  
կէր, իրեն Ատլանդեան ուկիանոսին  
մէջ կատարած հռչակաւոր ծովագա-  
ղականութեան միջոյ՝ ծովուն խորերէն.  
և սակայն ամենն ին փոյթ չենք ըներ  
մտածելու այն ծանրութիւնն զոր միշտ  
վրանիս կը կրենք: Այս օգս՝ որ զմեզ  
կը չընկալաւ յամենայն կողմանց, և  
գրեթէ մեր զգայարանաց նկատմամբ  
իրեն նիւթականութիւնն կը կորսնցը-  
նէ, և կ'երևի մեզ շատ աւելի թեթե-  
քան որ և իցէ նուրբ նիւթական մաս.  
նիկ մը, այս օգս իրեն բովանդակ ծան-  
րութեամբն, (զոր անհնար եղած է մինչ  
չև ցարդ ստուգել, բարձրութեան չա-  
փը անդիտելով), կը կշռէ հազարաւոր  
հազարակրամներ, այնպէս որ առ իւ-  
րաբանիւր մի մեզը քառակուսի՝ ծան-  
րութեան չափն կը յաւելու 10 տակա-  
ռաչափ, որ կ'ընէ 10,336 հազարա-  
կրամ. անառնելի ծանրութիւն. և սա  
կայն ոյս՝ առ մի քառակուսի մեզր-  
այլ եթէ առնուր բովանդակ իրեն  
ծանրութիւնն, իբր բարձրութիւն դնե-  
լով 60 հազարամեզր, (խոտորելով  
յերկուց ծայրից, որոց մին մինչև 940  
հազարարամիղր կ'իջեցընէ և միւսն  
մինչև 980 կը բարձրացընէ), պիտի ու-  
նենանք ծանրութիւն մը մեր ուսոց վե-  
րայ՝ գրեթէ համապօր 100,000 հազա-  
րակրամոց: Ուստի զայս մտածելով  
զգարմանսնք մեր զգայարանաց անըզ-  
գայութեան վրայ, և ոչ իսկ չիմանա-  
լան այն փոշին՝ որ զմեզ շարունակա-  
բար չընկալաւ: